

## Կարինե Յովսեփյան

### ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱԱՄԲ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ (1916-1917 թթ.)

**Գերմանի, ցեղասպանություն, Հայաստան, գաղթականություն, տեղահանում,  
դեսպան, հյուպատոս, պարենավորում, Միջագետք, երկաթուղի**

1916 թ. ամռանը Արևմտյան Հայաստանի մեծ մասը գրավված էր ռուսական զորքերի կողմից: Կովկասյան ճակատում 1916 թ. սկզբին ռուսական բանակի հաջողությունները նպաստեցին, որ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կողմից Օսմանյան կայսրության բաժանման հարցի շուրջ ընթացող բանակցությունները աշխուժանան: Այդ բանակցությունները պատմության մեջ հայտնի են անգլիացի Սայքսի և ֆրանսիացի Պիկոյի անուններով: 1916 թ. մարտի 6-ին այդ բանակցությունների մասին տեղյակ պահվեց ցարական կառավարությանը, որն էլ, իր հերթին, դժգոհություն հայտնեց, քանի որ Օսմանյան կայսրության ազդեցության տակ գտնվող բավական մեծ տարածքներ անցնում էին Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային:

1916 թ. արևմտահայության տեղահանությունը և կոտորածները կանխելուց բացի կարևոր էր նաև Միջագետքի անապատներ քշված և սովի ու համաճարակների մատնված հայության համար կենսական պայմաններ ապահովել: Հայ գաղթականներին օգնելու, հազարավոր հայերի փրկելու համար բարեգործական կազմակերպությունների, որոնց հնարավորությունները չափազանց նվազ էին: Այդ հարցի առնչությամբ 1916 թ. հունվարի 29-ին Հալեպի գերմանական հյուպատոս Ռյոսլերը Կ. Պոլսի գերմանիայի դեսպան կոմս Վոլֆ Մետերնիխին ուղղված հեռագրում նշում էր, որ գերմանացիների կողմից հայերին օգնելու համար հատուկ կազմակերպություն ստեղծել հնարավոր չեղավ: Կարիքն այնքան մեծ էր, որ հնարավոր չէր մերժել կազմակերպության ստեղծումը<sup>1</sup>: Սակայն թուրքական իշխանություններն ու հատկապես Ջեմալ փաշան արգելք հանդիսացան հայերին օգնություն կազմակերպելուն՝ այն համարելով թուրքիայի ներքին գործերին միջամտելու փորձ<sup>2</sup>: Կ. Պոլսի գերմանական դեսպան Մետերնիխը, չնայած որոշակի հայամետ դիրքորոշմանը, նախևառաջ հանդիսանում էր գերմանացի պետական գործիչ և պարտավոր էր ենթարկվել Բեռլինից եկած հրահանգներին: Այդ իսկ պատճառով 1916 թ. հունվարի 31-ին նա նշում էր, որ հայ բնակչության տեղահանումը պայմանավորված էր ռազմական շահերով և կարող էր համարվել պաշտպանական անհրաժեշտ գործողություն: Հայ գաղթականներին օգնելու

<sup>1</sup> Տե՛ս Լեփսիուս Յ., Գերմանիան և Հայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր II, Երևան, 2008, էջ 18:

<sup>2</sup> Տե՛ս  
, 1975, . 155.

հարցում պաշտոնական Բեռլինը նախընտրեց ոչ պաշտոնական ճանապարհ, քանի որ մտավախություն ուներ հայերին օգնություն ցուցաբերելը հանգեցնելու գերմանաթուրքական հարաբերությունների սրման: 1916 թ. փետրվարի 26-ին Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ Ցիմերմանը, անդրադառնալով հայ գաղթականներին աջակցելու խնդրին, նշում էր. «...1915 թ. Յայաստանի տուժածների համար Շվեյցարական օժանդակության միության հանձնաժողովի դիմումը՝ մեղմացնել բռնագաղթված հայերի տառապանքը, սիրով կընդունվի ու կհովանավորվի կայգերական կառավարության կողմից, ինչքան հնարավոր է, ապահովելով պահանջված հարգանքը դաշնակից Թուրքիայի նկատմամբ, օգնել ոչ պաշտոնական ճանապարհով: Կայգերական կառավարությունը իրազեկ է, որ հայերին օգնություն ցույց տվող Շվեյցարական օժանդակության միության գործունեությունը բխում է զուտ մարդկային կարեկցանքից, ուստի հուսով է, որ օգնության կազմակերպիչները կխուսափեն հոգուտ հայերի կամ Թուրքիայի դեմ որևէ քաղաքական ագիտացիա ծավալելուց»<sup>1</sup>: Ցիմերմանը արտահայտում էր պաշտոնական Բեռլինի տեսակետը, որը հիմնված էր գերմանաթուրքական դաշնակցային հարաբերությունների պահպանման և միջազգային ու սեփական հանրության շրջանում այն տպավորության ստեղծման վրա, իբր կայսերական Գերմանիան իսկապես մտահոգված է հայ գաղթականներին աջակցելու խնդրում և նպաստում է այդ հարցով զբաղվող բարեգործական ընկերություններին: Ցիմերմանը հայ աքսորյալներին օգնելու հարցում նախապատվությունը տալիս էր Շվեյցարական բարեգործական ընկերության առաջարկությանը՝ տեղերում գտնվող վստահելի անձանց միջոցով տառապյալներին բաժանել դրամ, հագուստ և սննդամթերք: Եթե համապատասխան մարդկանց շվեյցարական բարեգործական ընկերությունը դեռ չէր կարողացել գտնել, ապա գերմանացի պաշտոնյան առաջարկում էր դիմել կայսերական հյուպատոսության օգնությանը, որի միջամատությունը մեծապես կնպաստեր Գերմանիայի հեղինակության բարձրացմանը: Աքսորի ենթարկված և Միջագետքի անապատներում սովի ու համաճարակների մատնված հայությանը աջակցելու միջոցով Կայսերական Գերմանիայի կառավարությունը միջազգային հանրության առջև քաղաքական կարևոր քայլ էր փորձում կատարել: Դրանից բացի, գոյություն ուներ ևս մեկ կարևոր պատճառ, որի հետևանքով գերմանացի գործիչները շահագրգռված էին օգնելու աքսորված հայությանը: Յայ բնակչությանը օգնություն տրամադրելու գերմանական մտադրությունների հիմքում ընկած էր ոչ թե մարդասիրական, այլ կոնկրետ ռազմական շահը: Այդ խնդրի լուծումը թուրքական իշխանությունները տեսնում էին կոտորածները շարունակելու մեջ: Եթե Գերմանիայի ղեկավարությունը հրաժարվեց հայ գաղթականներին պաշտոնական օգնություն տրամադրելուց, ապա ակնհայտ է, որ հայ գաղթականների ճակատագիրը չէր հետաքրքրում նրան: Ավելին, գերմանական կառավարության ներկայացուցիչները խիստ քննադատության էին ենթարկում այն գերմանացի գործիչներին, ովքեր

---

<sup>1</sup> Լեփսիուս Յ., Գերմանիան և Յայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր II, էջ 29:

փորձում էին առանց թուրքերի հետ համաձայնեցնելու որևէ կերպ օգնել հայ գաղթականությանը: Բաղդադի երկաթուղու շինարարությունը ղեկավարող գերմանացի պաշտոնյաները ոչ միայն ակամատես եղան հայ բնակչության տեղահանությանը և կոտորածներին, այլև որպես Օսմանյան կայսրության հարավային երկաթուղային հանգույցները համակարգողներ, անուղղակի մասնակցություն ունեցան արևմտահայության տեղահանությանը դեպի Միջագետքի անապատներ: 1916 թ. Բաղդադի երկաթուղու վրա աշխատող հայերին տեղահանելուց հետո հարյուրավոր երեխաներ մնացին անօթևան և գերմանացի Կոպպելի կողմից նրանք հավաքվեցին և տեղափոխվեցին Ինթիլլի որբանոց: Դրա համար Կոպպելը խիստ դատապարտվեց Բաղդադի երկաթուղու շինարարության գերմանացի տնօրենի կողմից<sup>1</sup>:

Ադանայի գերմանական հյուպատոսության տվյալներով 1916 թ. ապրիլի 16-ի դրությամբ Բաղդադի երկաթգծի կառուցման աշխատանքներին ներգրավված էին շուրջ 1000 բռնագաղթված հայեր, որոնք հետագայում նույնպես ենթարկվեցին կոտորածների և աքսորի<sup>2</sup>: Ֆրիդրիխ Նաունանը առաջին աշխարհամարտի տարիներին հրատարակած «Միջին եվրոպա» խորագիրը կրող գրքում գրում էր. «...Քրիստոնեական Գերմանիան միայն կարող է խղճալ հայերին, ուրիշ ոչինչ: Նա չի կարող հայերի համար հանդես գալ իր դաշնակցի դեմ: Իր շահերից ելնելով՝ Գերմանիան չպետք է թուլացնի թուրքիային»<sup>3</sup>: Հայ գաղթականությանը օգնելու պատրաստակամություն հայտնեցին ԱՄՆ կառավարությունը և ամերիկյան բարեգործական ընկերությունները, որոնք առաջարկեցին Գերմանիայի ղեկավարությանը՝ համատեղել ջանքերը հայ բնակչությանը օգնելու: Այդ առիթով Կ. Պոլսի գերմանական դեսպան Մետերնիխը 1916 թ. մայիսի 25-ին Գերմանիայի արտգործնախարարությանը ուղղված իր զեկուցագրում գրում էր. «Կոմս Բերնսդորֆի կողմից հայերին և ասորիներին ամերիկյան օգնության կոմիտեի ընդունելությունը բոլոր դեպքերում ինձ անցանակալի է թվում... թուրքական կառավարությունը, որ մշտապես բացասաբար է վերաբերվել գերմանա-ամերիկյան համագործակցությանը Հայկական հարցում և կտրականապես մերժել է այդ իսկ պատճառով ես կառաջարկեի, որ կոմս Բերնսդորֆը խնդրեր պարոն Մորգենթաուին, հաշվի առնելով վերջինիս հետ բարդ փոխհարաբերությունները Հայկական հարցի քննարկման ժամանակ, հետ պահել կոմիտեին իր ծրագրերից... ավելի շուտ առկա է վտանգը, որ նաև գերմանացիների ջանքերը ուղղված հայ բնակչության կարիքների մեղմացմանը կտապալվեն»<sup>4</sup>: Կայսերական Գերմանիայի ղեկավարությունը

<sup>1</sup> Տե՛ս Անտոնյան Ա., Մեծ ոճիրը. Հայկական վերջին կոտորածները և Թալեադ փաշան, Պաշտոնական հեռագրեր, Բոստոն, 1921, էջ 62:

<sup>2</sup> Տե՛ս Լեփսիուս Յ., Գերմանիան և Հայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր II, էջ 55:

<sup>3</sup> Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Եր., 1964, էջ 269:

<sup>4</sup> Տե՛ս Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915-1918 թթ.), ըստ Կայսերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի վավերագրերի, կազմող և առաջաբանի հեղինակ, ակադեմիկոս Վ. Միքայելյան, Եր., 2004, էջ 128:

խուսափեց համագործակցել ամերիկյան բարեգործական ընկերությունների հետ, քանի որ դա կարող էր առաջացնել թուրքական իշխանությունների դժգոհությունը, իսկ ամերիկյան բարեգործական ընկերությունները անգամ աջակցեցին գերմանական որբանոցներում ապաստանած հայ երեխաներին: Ադանայի գերմանական հյուպատոսության 1916 թ. ապրիլի 15-ի զեկուցագրում նշված է. «Չարունիեի գերմանական որբանոցը ներկայումս ընդունել է Օսմանիեից տեղահանված մեծ թվով հայերի, որոնք ամերիկյան կողմից ստացել են անհրաժեշտ միջոցներ»<sup>1</sup>: 1916 թ. նոյեմբերի 28-ին Լեփսիուսը դիմեց Գերմանիայի կառավարությանը՝ տեղահանված հայերին օգնելու խնդրանքով, որում ասվում էր, որ հանուն հայերին օգնելու ինքը պատրաստ է միջոցներ ձեռնարկել հակաթուրքական որևէ արտահայտություն չանելու: 1917 թ. օգոստոսի 20-ին Գերմանիայի պետական քարտուղարի օգնականը, անդրադառնալով հայ գաղթականներին փրկելու նպատակով գումարներ հավաքելու Յ. Լեփսիուսի առաջարկությանը, իր գաղտնի զեկույցում՝ ուղղված ներքին գործերի նախարարության բարեգործական հարցերով կոմիսարին, այն կարծիքն էր հայտնում, որ քաղաքական տեսակետից չափազանց ցանկալի կլինի չխոչընդոտել այդ միջոցների հավաքմանը և հնարավորություն տալ Լեփսիուսին շարունակելու իր օգնության ակցիան, սակայն թույլ չտալ մամուլում հրապարակային կոչերի՝ հաշվի առնելով թուրք դաշնակիցների հնարավոր դժգոհությունը: Նշված հանգամանքից ելնելով՝ պետական քարտուղարի օգնականը խնդրում էր ներքին գործերի նախարարությունից՝ թույլ տալ Լեփսիուսին անհրաժեշտ միջոցներ հավաքել:

Թուրք պաշտոնյաները հայ բնակչության տեղահանությունը դեպի Միջագետքի անապատային շրջաններ փորձում էին ներկայացնել որպես վերաբնակեցման քաղաքականություն: «Վերաբնակեցման» թուրքական քաղաքականության մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում Բաղդադի երկաթուղու ինժեներ Էռնստ Փիփերը. «Ասացին, որ հայերին բերել են բնակեցնելու Բաղդադի երկաթուղուց 25-30 կմ հեռավորությամբ մի տարածքում: Սակայն արսորյալները միայն կանայք ու երեխաներ էին: Տղամարդիկ, ծերերին չհաշված, պատերազմ էին գնացել: Այնպես որ այստեղ ընտանիք չկար այլևս, որովհետև հող մշակող աշխատուժ չկար, չկար փող և այլ շատ բաներ»<sup>2</sup>: Այդ քաղաքականության մասին կարևոր տեղեկություններ է պարունակում 1915թ. վերջից Չալեպի գերմանական հյուպատոսության աշխատակից Վիլհելմ լիտենի «Գրառումներ Բաղդադից Չալեպ կատարած ճանապարհորդություններից ստացած տպավորությունների մասին» վերնագրով աշխատությունում: Չեղինակը 1916 թ. հունվարի 17-ից մինչև փետրվարի 4-ը ակամատես է եղել հայերի կոտորածներին: Նա նշել է, որ «...Հայերին թուրքերը անվանում էին ոչ թե գերիներ, այլ վերաբնակիչներ, և նրանք իրեն ևս այդպես էին կոչում: Եվ մահվան ամենագզվելի այդ տեսակը

<sup>1</sup> Լեփսիուս Յ., Գերմանիան և Հայաստանը 1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր II, էջ 55:

<sup>2</sup> Չոմներ Է., Եզմարտությունը աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում հայ ժողովրդի կրած տառապանքների մասին, գերմաներենից թարգմանեց Էվելինա Սակարյանը, Եր., 2002, էջ 46:

պաշտոնական հաղորդագրությունների մեջ կոչվում էր վերաբնակեցում»<sup>1</sup>: Ըստ գերմանացի միսիոներների, գերմանական օգնության միությունում աշխատող բոլոր հայ քրիստոնյաները՝ տղամարդիկ, կանայք և երեխաները, կառավարության ցուցակներում գրանցվեցին որպես գերմանական առաքելությանը պատկանող անձինք և խուսափեցին աքսորից<sup>2</sup>: Սակայն իրականում աքսորից և կոտորածներից խուսափեցին գերմանական այդ կազմակերպությունների անդամ հանդիսացող քիչ թվով հայեր: Թուրքերը անգամ չխնայեցին գերմանական որբանոցներում ապաստանած հայ երեխաներին, իսկ գերմանական կառավարությունը նրանց պաշտպանելու համար լուրջ ջանքեր չգործադրեց: Գերմանական օգնության միության աշխատակից Շուխարտը 1917 թ. ապրիլի 21-ին Կ. Պոլսի գերմանական դեսպանատան գաղտնի խորհրդական ֆոն Ռոզենբերգին ուղղած նամակում մեջբերում է Բաղդադի երկաթգծի կայարաններից մեկում աշխատող մի կնոջ հուշերը, որում ասվում էր. «Այստեղ մեզ մոտ գտնվում են շատ հայեր Մարաշից, ինչպես նաև նախկին որբեր գերմանական որբանոցներից: Վերջերս կրկին տեղի ունեցան զանգվածային տեղահանություններ...Այսօր ստացվեց հաղորդագրություն, որ այստեղից բոլորը պետք է հեռանան»<sup>3</sup>: Գերմանական իշխանությունները լուրջ ջանքեր չգործադրեցին անգամ գերմանական որբանոցներում ապաստանած հայ որբերին փրկելու համար: Ավելին, Բաղդադը անգլիացիների կողմից գրավելուց հետո գերմանացիները շարունակեցին աջակցել ջիհադին: Գերմանացիների կողմից խրախուսվող այդ քաղաքականության հետևանքով մոլեռանդ մահմեդականների հարձակումների զոհ էին դառնում անպաշտպան հայ գաղթականները:

Միջագետքի անապատներում ապաստանած հայ գաղթականների նկատմամբ պաշտոնական Բեռլինի դիրքորոշման ուսումնասիրման տեսանկյունից կարևոր տեղեկություններ են պարունակում Հալեպի գաղթականների տեսուչի գլխավոր քարտուղար Նայիմ բեյի հուշերը: Հեղինակը նշում էր, որ 1916 թ. գերմանաթուրքական զորքերի կողմից Բաղդադը վերագրավելու նպատակով Դեր Ջոր ժամանեցին գերմանացի սպաներ և ինժեներներ, որոնք մի քանի օր ուսումնասիրեցին տեղանքը: Մեծ թվով հայ գաղթականների ներկայությունը այդ գծի վրա անհանգստացնում էր գերմանացիներին, որոնք համոզված էին, որ հայ գաղթականները հարաբերությունների մեջ էին արաբ լրտեսների հետ, որոնց ուղարկում էին անգլիացիները: Այնուհետև, ըստ հեղինակի՝ «... Գերմանացուց կողմ է եղած շարունակական դիտողութանց վրայ՝ կառավարութիւնը հեռագիր հեռագիրի հետեւ է կը հասցներ, այդ գծին երկայնքը գտնուող հայերը վայրկեան

<sup>1</sup> Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915-1918 թթ.), ըստ Կայսերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի վավերագրերի, կազմող և առաջաբանի հեղինակ ակադեմիկոս Վ. Միքայելյան, Եր. 2004, էջ 8:

<sup>2</sup> Նույնը, էջ 52-53:

<sup>3</sup> Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915-1916 թթ.), ըստ Կայսերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի վավերագրերի, կազմող և առաջաբանի հեղինակ՝ Վ. Միքայելյան, Եր. 2004, էջ 189-190:

մը առաջ իջեցնելու համար Ջօր, ուր պիտի ջարդուէին անողորմ կերպով»<sup>1</sup>: Հայ գաղթականների կացարանների մոտով էր անցնում Բաղդադի վերագրավման համար նախատեսված հիմնական զորքի՝ «Երլտըրըմ» կամ «Կայծակ» բանակի պարենավորման գիծը, ինչպես նաև ռազմական տեխնիկան:

Սակայն գերմանացիների հիմնական մտահոգությունը կայանում էր հայ գաղթականների կողմից գերմանաթուրքական հարձակվող բանակի համար պարենավորման խնդիրներ ստեղծելը: Կայսերական Գերմանիայի ղեկավարությունը ոչ միայն չօգնեց Միջագետքի անապատներում ապաստանած հայ գաղթականությանը, այլև անուղղակի նպաստեց, որ հայության այդ հատվածը նույնպես ենթարկվի կոտորածի: Հիմնական կոտորածները սկսվեցին, երբ գերմանական զինվորականների անդամք թուրքական զորքերը սկսեցին Հալեպի և շրջակայքի հայության տեղահանությունը Մեսքենե: Սակայն թուրքական բանակը չգրավեց Բաղդադը, քանի որ Պաղեստինյան ճակատում վիճակը բավականին լուրջ էր:

Այսպիսով, Կայսերական Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ հայ գաղթականներին օգնելու խնդիրը կարևորվում էր այնքանով, որքանով անհրաժեշտ էր միջազգային հանրության մոտ այն տպավորությունը ստեղծել, որ գերմանացիները մեղսակից չեն երիտթուրքերի ցեղասպան քաղաքականությանը: Բայց մենք համոզված ենք, որ Գերմանիայի ղեկավարությունը հրաժարվեց հայության փրկված հատվածին պաշտոնական աջակցություն ցույց տալ՝ հարմարվելով թուրքերի վարած քաղաքականությանը:

**Կարինե Հովսեփյան, Հայ գաղթականության նկատմամբ Կայսերական Գերմանիայի դիրքորոշումը 1916-1917 թթ.** – Հոդվածում ուսումնասիրված է Առաջին աշխարհամարտի տարիներին Կայսերական Գերմանիայի դիրքորոշումը Օսմանյան կայսրության կողմից տեղահանված հայ գաղթականության նկատմամբ: Քննարկվում է այն փաստը, որ Գերմանիայի ղեկավարությունը հրաժարվեց հայության փրկված հատվածին պաշտոնական աջակցություն ցույց տալ, քանի որ դա կարող էր հանգեցնել գերմանաթուրքական հարաբերությունների սրմանը: Հայ գաղթականներին օգնելու խնդիրը կարևորվում էր այնքանով, որ անհրաժեշտ էր միջազգային հանրության մոտ այն տպավորությունը ստեղծել, թե գերմանացիները մեղսակից չեն երիտթուրքերի ցեղասպան քաղաքականությանը:

**Карине Овсеян, Позиция Кайзеровской Германии по отношению к армянским беженцам 1916-1917 гг. –**

а

<sup>1</sup> Անտոնյան Ա., Մեծ ոճիրը. Հայկական վերջին կոտորածները և Թալեադ փաշան, Պաշտոնական հեռագրեր, Բոստոն 1921, էջ 77-78:

**Karine Hovsepyan, The position of Kaiser Germany toward the Armenian refugees in 1916-1917** – This article explores the position of Germany toward the Armenian refugees exiled to the desert regions of the Ottoman Empire during World War I.

This article discusses the fact that the government of Germany officially refused to help Armenians as it could cause decline Germany-Turkish relations.

In the foreign policy of the Kaiser Germany the problem of helping the Armenian refugees was as important as it was necessary to make such impression among the international society that the Germans weren't guilty in genocide policy of the Young Turks.

*Կարինե Հովսեփյան – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի  
մագիստրատուրայի շրջանավարտ*

